

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

"Կայուն այգեգործական համակարգերում ներդրումների քարտեզագրում ու պլանավորում և Լանդշաֆտի վերականգնման ուսումնասիրություն ու պլանավորում" GEF/TA/QCBS-2016/009

Հայաստանի Հանրապետություն

Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամ /ԳԷՀ/, Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում ծրագրի Դրամաշնորհ

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Որակի և Գնի վրա հիմնված ընտրություն*

ԳԷՀ Դրամաշնորհ No 2000001401

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել ԳԷՀ /այսուհետ՝ ԳԷՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ/ իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

Ծրագրի նպատակն է՝

Ա. Կայուն այգեգործական համակարգերում ներդրումների քարտեզագրում ու պլանավորում մատուցողը (ԿԱՀՆՔՊ) «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» (ՀԱԱՈւՀԿԿ) ծրագրին պետք է տրամադրի ավարտուն ագրոտատաբարելավման ռազմավարական շրջանակ, Արարատի մարզի հատուկ կարիքներին և առանձնահատկություններին հարմարեցված իրականացման պլան և ի վերջո թիրախային համայնքներին աջակցի ներդրումների նյութականացման միջոցով: Ընդ որում, ԿԱՀՆՔՊ -ն սերտորեն կաշխատի համապատասխան միջազգային փորձագետի հետ, որը կստանձնի Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքների՝ Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) մասնակցային քարտեզագրման աշխատանքները, որպեսզի (i) քարտեզագրի 3 մարզերի հողերն ըստ օգտագործման (բավականաչափ հանգամանալից կերպով)՝ հստակորեն սահմանազատելով վերջերս (օրինակ՝ մինչև 30 տարի առաջ) լքված գյուղատնտեսական հողերը և արոտավայրերը, փաստացի գյուղատնտեսական հողերը և արոտավայրերը, բնական բուսածածկով հողերը, քաղցրահամ ջրային տարածքները, քաղաքային բնակավայրերը, ճանապարհները և այլն:

Աշխատանքի շրջանակ

ԿԱՀՆՔՊ-ն կաջակցի ՀԱԱՈւՀԿԿ-ին երկու հիմնական ուղղություններով. առաջինը ներառում է *Սահմանային համայնքային հողերում արտադրողականության աճին ուղղված ներդրումներ կայուն այգեգործական համակարգերում*, ընդհանուր ռազմավարական պլանավորման հետ կապված խնդիրները, իսկ երկրորդի նպատակն է աջակցել թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և պոտենցիալ վերջնական շահառուներին ներդրումների նյութականացման գործում: Ավելի հստակ, ԿԱՀՆՔՊ -ի պարտականությունները ներառում են բայց չեն սահմանափակվում.

1. Ռազմավարական շրջանակի մշակում պտղատու ծառերի սորտերի ընտրության, տնկման, կառավարման և արտադրական/մարքեթինգային միջամտությունների համար՝ հաշվի առնելով բնապահպանական՝ հողի և կլիմայի հատկանիշներ, հողի պահպանության կարգավիճակ և կլիմայական ռիսկեր, և սոցիալ-տնտեսական միջավայրը՝ հատկապես ուշադրություն դարձնելով Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքներին:
2. Տեղեկատվության տրամադրման ռազմավարության մշակում՝ ուղղված պոտենցիալ վերջնական շահառուներին և գնահատման համակարգի ներկայացում՝ վերջնական շահառուների գնահատման և ընտրության գործում թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին օժանդակելու նպատակով:
3. Խոցելի տեղանքների ընտրություն և հողերի դեգրադացման խնդիրների հիմնապատճառների բացահայտում:

4. Նպատակահարմար տեղանքների ընտրությունն ագրոտատառային մշակաբույսերի տնկման և/կամ վերականգնման համար նախկինում գյուղատնտեսական նպատակների կամ արոտավայրի համար հատկացված համայնքային հողատարածքների շրջանակում, որոնք այլևս պիտանի չեն արտադրության համար՝ հստակ և ակնհայտ դեգրադացման խնդիրների պատճառով:
5. Յուրաքանչյուր ընտրված տեղանքում հողերի դեգրադացման տեսակների և աստիճանի քանակական/որակական արտահայտում և առաջարկությունների ներկայացում հողի վերականգնման տարբերակների և կարիքների վերաբերյալ:
6. Կլիմայի փոփոխությունների նկատմամբ դիմացկուն, առավել նպատակահարմար ագրոտատառային տեսակների և սորտերի ընտրություն, որոնք կնպաստեն հողի պահպանությանը՝ յուրաքանչյուր տեղանքի պայմաններին համապատասխան:
7. Ընտրել և նկարագրել. (i) առաջարկվող ագրոտատառային սորտերի բարձրորակ տնկիների արտադրության և/կամ ընտրության չափանիշների առավել նպատակահարմար տեխնոլոգիաները, (ii) ամենանորարարական ագրոնոմիական համակարգերը և տեխնոլոգիաները և (iii) մոնիթորինգի և գնահատման մեթոդները:
8. Մշակել արտադրության պլան, վերամշակման պլան և մարքեթինգային ծրագիր:
9. Մահմանել մեթոդաբանություն և տրամադրել տեխնիկական աջակցություն՝ կանխարգելելու ծրագրային ներդրումների հետևանքով բնական էկոհամակարգերի վերափոխումը գյուղատնտեսական հողերի:

Բ. Լանդշաֆտի վերականգնման ծառայություն մատուցողը (ԼՎՕՄ) «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» (ՀԱԱՈւՀԿԿ) ծրագրի շրջանակում պետք է գործնական աջակցություն տրամադրի տեղական ինքնակառավարման մարմիններին և ՋՕԸ-ներին լանդշաֆտի վերականգնման պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործողությունների ողջ ընթացքում: Ընդ որում, ԼՎՕՄ-ն սերտորեն կաշխատի համապատասխան միջազգային փորձագետի հետ, որը կստանձնի Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքների՝ Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ, GIS) մասնակցային քարտեզագրման աշխատանքները, որպեսզի (i) քարտեզագրի 3 մարզերի հողերն ըստ օգտագործման (բավականաչափ հանգամանալից կերպով)՝ հստակորեն սահմանազատելով վերջերս լքված գյուղատնտեսական հողերը և արոտավայրերը, փաստացի գյուղատնտեսական հողերը և արոտավայրերը, բնական բուսածածկով հողերը, քաղցրահամ ջրային տարածքները, քաղաքային բնակավայրերը, ճանապարհները և այլն:

Աշխատանքի շրջանակ

ԼՎՕՄ-ն կաջակցի ՀԱԱՈւՀԿԿ-ին երկու հիմնական ուղղություններով. առաջինը ներառում է *Գյուղատնտեսական արտադրության վերականգնմանն աջակցող էկոհամակարգային ծառայություններ*, ընդհանուր ռազմավարական պլանավորման հետ կապված խնդիրները, իսկ երկրորդի նպատակն է աջակցել թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և ՋՕԸ-ներին ներդրումների նյութականացման գործում: ԼՎՕՄ-ի պարտականությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում.

1. Ռազմավարական շրջանակի մշակում Անտառային լանդշաֆտների վերականգնման միջամտությունների համար՝ հաշվի առնելով բնապահպանական՝ հողի և կլիմայի հատկանիշներ, հողի պահպանության կարգավիճակ և կլիմայական ռիսկեր, և սոցիալ-տնտեսական միջավայրը՝ Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքներում:
2. Տեղեկատվության տրամադրման ռազմավարության մշակում:
3. Անտառային հողերի վերականգնման (ԱՀՎ) համար առաջնահերթ լանդշաֆտների որոշում, և յուրաքանչյուր լանդշաֆտային միավորում մի շարք խոցելի տեղանքների ընտրություն, որոնցում առկա են հարևան գյուղատնտեսական հողերի վրա ազդող հստակ ու ակնհայտ դեգրադացման խնդիրներ:
4. Հայաստանի և հարևան երկրների հաջողված ԱՀՎ փորձառությունների գնահատում, որը պետք

է բացահայտի ֆիզիկական ու կենսակլիմայական պայմանների նկատմամբ կիրառելի նորարարական մոտեցումները, մեթոդաբանությունը և գործիքները, շահագրգիռ կողմերի նպատակները և դեգրադացման մակարդակը Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի առաջնահերթ լանդշաֆտներում և յուրաքանչյուր լանդշաֆտային միավորի ընտրված վայրերում:

5. Բնապահպանական և տեխնիկական դիտարկումների տեխնիկական, համակողմանի ուսումնասիրություն, որոնք կիրառելի են տարբեր տեղանքների վերականգնման կարիքների համար, որոնք կարող են կիրառվել Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի համայնքներում:
6. Ջրային հոսանքների ափերի կայունացման կենսաինժեներական լուծումների ու մեթոդների և հողերի էրոզիայի վերահսկողության համակողմանի տեխնիկական ուսումնասիրություն,
7. Ձեկույց բնապահպանական վերականգնման միջամտությունների ուղղակի և անուղղակի տնտեսական օգուտների վերաբերյալ (ծախսերի և օգուտների վերլուծություն)՝ փաստարկված կոնկրետ օրինակներով, որոնք համապատասխանում են հայաստանյան համատեքստին:
8. Հայաստանի և արտերկրի փորձից առանձին դեպքերի ուսումնասիրությունների համառոտագիր, որում ներկայացված է լավագույն ԱՀՎ պրակտիկան:

Ծրագիրը իրականացնելու համար խորհրդատուի ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով ԾԻԳ-ը բոլոր շահագրգիռ և որակավորված կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր:

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվություն;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),

Կարճ ցանկի կազման նպատակով կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝

- Վերջին հինգ տարիների ընթացքում Կայուն ալգեգործական համակարգերում ներդրումների քարտեզագրման ու պլանավորման փորձառություն (առավելագույնը 50 միավոր)
- Վերջին հինգ տարիների ընթացքում Լանդշաֆտի վերականգնման ուսումնասիրման ու պլանավորման փորձառություն (առավելագույնը 50 միավոր)

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 2-3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. <https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2017թ. Մարտի 27-ը, ժ. 17.00:

***ՀՀ ԿՍ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի
իրականացման գրասենյակ” ՊՀ
Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ:***

Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Գաբա՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: procurement@raed.am